# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

գ. Շիրակամուտ

N— Ե -03/123

«09» 10 2017թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 38 որոշումը:
Առդիր 1 էջ:

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ռ.Պապիկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«02» հոկտեմբերի 2017 թվականի N38 - Ա

**ԱՐԻՍՏԱԿԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1179201 վկայականը և Արիստակես Պետրոսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արիստակես Արամայիսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Շիրակամուտ համայնքի Արցախի փողոցի վրա գտնվող 06-087-027-003 կադաստրային ծածկագրով 0,117 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի և դրա վրա գտնվող բնակելի տան հասցեն փոխել «գ. Շիրակամուտ, փողոց Արցախի», թիվ 73 » հասցեով:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ռ.Պապիկյան